


1.2.6. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ (սպառողական շուկա)

ՀՀ սպառողական շուկա (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)

	2002թ. հունվար-ապրիլ		% -ով ընդհանուրի նկատմամբ	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	%-ով 2001թ. հունվար-ապրիլի նկատմամբ	2002թ. հունվար – ապրիլ	2001թ. հունվար-ապրիլ
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը	196721.6	108.0	100	100
<i>այդ թվում</i>				
մանրածախ ապրանքաշրջանառություն	145044.5	109.1	73.7	72.9
բնակչությանը մատուցված ծառայություններ	51677.1	105.4	26.3	27.1

ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները
(% ընդհանուրի նկատմամբ)



2002թ. հունվար-ապրիլին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի աճ 2001թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ (համադրելի գներով՝ 8.0%) և դրանում 0.8 տոկոսային կետով ավելացել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռն ու համամասնորեն նվազել բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը: 2002թ. ապրիլին սպառողական շուկայի ծավալը մարտի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 97.9%:

Մանրածախ առևտուր


2002թ. հունվար-ապրիլին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 145.0 մլրդ. դրամ, որը 2001թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, կազմել է 109.1% (2002թ.ապրիլին մարտի համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 99.4%) :

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2002թ. հունվար-ապրիլին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը % ընդհանուրի նկատմամբ
Ընդամենը	145044.5	100.0
այդ թվում՝		
խանութներ	76916.4	53.0
հանրային սննդի կազմակերպություններ	1542.9	1.1
սպառողական ապրանքների շուկաներ (տոնավաճառներ)	37160.1	25.6
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	6543.8	4.5
կրպակներ	22881.3	15.8

Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2002թ. հունվար-ապրիլին

(% ընդհանուրի նկատմամբ)



2002թ. հունվար-ապրիլին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում, սպառողական ապրանքների շուկաներում (տոնավաճառներում) և կրպակներում իրականացվող առևտուրը՝ 94.4% (136957.8 մլն.դրամ), իսկ 5.6%՝ (8086.7 մլն. դրամ) բաժին է ընկել հանրային սննդի կազմակերպություններում և գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում իրականացվող առևտրին:

Հանրապետության մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Հաշվառված սպառողական ապրանքների շուկաներից (տոնավաճառներից) ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2002թ. հունվար-ապրիլին ապրանքաշրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 37160.1 մլն. դրամ:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների (տոնավաճառների) ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի 2002թ. հունվար-ապրիլին


	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ % ընդհանուրի նկատմամբ	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
Արագածոտն	89.3	-	100
Արարատ	206.2	14.3	85.7
Արմավիր	284.8	51.6	48.4
Գեղարքունիք	473.7	16.5	83.5
Լոռի	855.8	53.6	46.4
Կոտայք	497.1	24.1	75.9
Շիրակ	314.5	0.3	99.7
Սյունիք	176.1	1.7	98.3

1. ԻՐԱԿԱ Ն ՀԱՏՎԱԾ

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ % ընդհանուրի նկատմամբ	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
Վայոց ձոր	-	-	-
Տավուշ	465.8	65.9	34.1
ք. Երևան	33796.8	14.0	86.0
Ընդամենը ՀՀ	37160.1	15.8	84.2

Հարկ է նշել, որ հանրապետությունում գործող սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում, 2002թ. հունվար-ապրիլին, կազմել է 84.2%, իսկ պարենային ապրանքներինը՝ 15.8%:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների (տոնավաճառների) ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը ըստ ք. Երևանի և մյուս մարզերի (ամփոփ)
(% ընդհանուրի նկատմամբ)



2002թ. հունվար-ապրիլին 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է Երևան քաղաքի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի աճ 2.5 տոկոսային կետով:

2002թ. մայիսի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 28539.6 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 52 օր:

Հանրապետության սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվար-ապրիլին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 4.5% կամ 6543.8¹ մլն. դրամը:


¹ Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:

Բնակչությանը մատուցված ծառայություններ

2002թ. հունվար-ապրիլին հանրապետությունում, ըստ ծառայություններ մատուցող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև չհաշվառված դաշտի լրահաշվարկի, բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է մոտ 51.7 մլրդ.դրամ, որը 2001թ. հունվար-ապրիլի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 5.4%-ով:

Կենցաղային ծառայությունների ծավալը կազմել է 675.0 մլն. դրամ, որը 2001թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 13.6%-ով: 2002թ. հունվար-ապրիլին 2001թ. հունվար-ապրիլի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 0.5% հավելաճ, որը հիմնականում պայմանավորված է օդային տրանսպորտի (5.2%), կենցաղային ծառայությունների (1.1%), փոստային և հեռահաղորդակցության (4.1%), կրթության (4.8%), մշակույթի (6.0%), զբոսաշրջության և էքսկուրսային (2.5%) ծառայությունների սակագների հավելաճով: Նվազել են բժշկական սպասարկման և առողջարանների ու հանգստյան տների ծառայությունների սակագները (համապատասխանաբար՝ 4.0 և 0.6%-ով):

Բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքը 2002թ. հունվար-ապրիլին
(% ընդհանուրի նկատմամբ)



2002թ. հունվար-ապրիլին բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում գերակշռել են մարդատար տրանսպորտի և բնակարանային-կոմունալ տնտեսության ծառայությունները, համապատասխանաբար՝ 37.5 և 27.8%:

2002թ. հունվար-ապրիլին 37 խաղատներից հավաքագրված հաշվետվությունների տվյալներով, ծառայությունների ծավալը կազմել է 383.4 մլն.դրամ կամ ծառայությունների ընդհանուր ծավալի 0.7%-ը: